

արդեօք, որ այնպիսի քաղաքում, ինչպիսին է Բա-
գրուս, այդ երկույթը գոյություն է ունենում Վա-
յթի է միթե Բագրուս հասարակությունները
անտարբեր վերաբերվել դեպի այդպիսիների դե-
րությունը: Մենք չենք ուզում և չենք էլ կարող
ասել թե՛ բազմություններ աղքատներին քիչ են օգ-
նում, ընդհակառակը՝ այստեղ աղքատներին օգ-
նություն հասցնելը շատ աչքի ընկնող բան է: Բայց
ինչպիսի է, որ մուսուլմաններ միշտ տեսնում էք ան-
տանիկի դրություն մեջ, չը նայած մինչև անդամ
հասցրած օգնություններ: Մեզ թվում է, որ դրա
պատճառը նրանումն է կայանում, որ օգնություն-
ներ հասցնելու է անհատներին, պատահաբար, երբ
գրգռվում մանր փող կը լինի: Եւ մուսուլմանը
որքան էլ փող հաւաքած լինի, այնու ամենայնի-
նա պէտք է պատահաբար շորերով, իրան ֆիդի-
քական պակասությունները ուրիշի աչքի գցելով
հանդէս դուրս գալ: Եւ որ միայն դրանով կարող
է նա առատ նուիրատուութեան սպասել: Հենց
այդ պատճառով մուսուլմաններին հիմնական օգ-
նություն կարելի է անել կանոնաւոր օգնությունով,
նրանց ապաստարաններ տալով, և մի աղքատա-
նոցի ու անկեղծների հիմնարկությունը այդ պատ-
ճառով աւելի օգնություն կարող է անել, քան
թե՛ պատահամբ արած, նոյն իսկ մեծ նուէրնե-
րը: Թող բացօթյա հաւատացած լինեն, որ այն
կոպիտները և բուրլիները, որ նրանք բաժանում
են աղքատներին, ի մի հաւաքած աւելի օգուտ
կը տան, աւելի դործ կը տեսնեն, քան թե՛ այժ-
ման ձևով արած օգնությունը:

Յունիսի 7-ից ԱՅՍԱՆՍՏՈՒՅՑ մեզ գրում են.
«Այսօր, տեղական հայոց դպրոցի նախկին ու-
սուցիչ Պ. փողոցում հանդիպելով Ա. Յին և
հետո մի փոքր խօսակցություն ունենալով, դե-
ք ձեռքին յարձակում դործեց նրա վրա: Ու-
սուցիչը ձեռքակալվեց»:

Կ. Պոլսում մայիսի 25-ին հանդիսաւոր կերպով
կատարվել է հանգուցեալ Գաբրիէլ քահանայ
Պատկանանի քառասունօրեայ հոգեհանգիստը:
Մարգարիտ եպիսկոպոս Օրմանեան այդ առիթով
ճառ է խօսացել: Մանրամասնաբար նկարագրե-
լով այդ հոգեհանգիստը, «Արեւել» լրագիրը
գրում է և հետևելով. «Այս հոգեպարար հան-
դիսին մեծ փայլ մը տուաւ այ. Ներսէս Շահա-
մեանց, որ, Պատարագի օկիդէն մինչև վերջն
յաճախակի հնչեցնելով իւր քաղաքակրթով ձայնն,
ընդհանուր սքանչալի աղբիւր ունեցող Գան-
ձակցին հայտադրի երկրի առիթ ունեցաւ պարզել
իր քաջարեւոտ ձայնին ամբողջ ձոնութիւնն,
ամենատեղ խաղերէն սկսեալ մինչև ամենա-
բարձր աւանդներ: Հոգեհանգստէն յետոյ, պ. Շահ-
լամեանց նշանաւոր ազգայնոց ջերմ խնդրակցու-
թեան արժանացաւ Պարոնը յառաջիկայ կիրակի
ալ յատուկ հրաւիրամբ ներկայ պիտի գտնուի
Ազգային Մասնաւորութեան տարեդարձի հան-
դիսին»:

Ամառվայ արձակուրդները սկսվելուն պէս
Թիֆլիսի հասարակաց գրասարաններում սկսել են
երեւալ մեծ թվով ուսանողներ, որոնք Ռուսաս-
տանի դանապան համալսարանական քաղաքներից
սկսել են գալ Կովկաս՝ ամառային ամիսները
անցկացնելու, ուրախանալու և հանգստանալու
համար: Լաւ ապագություններն է թողնում այն կեն-
դանությունը, որ տիրում է ուսանող երիտասար-
դություն մեջ և նրա շուրջը:

Շուր եղանակը սկսվում է, և դրա հետ միասին
Թիֆլիսի Միջնակարգ փողոցի բազմաթիւ այդի-
ներում խմբով ահագին բազմություններ, որը
բաղկացած է ամեն տեսակ մարդկանցից, իրան
նուիրում է Բաքուի երկրպագութեան, կեր ու
խումբի և հեշտափրփութեան... Այդ այդպիսի մոլ-
անկեղծները ինչ տեսարաններ, ինչ սկանդալ-
ներ չեն պատահում ինչ արած... մեր ժողովուր-
դը ուրախութեան ուրիշ տեղ և ուրիշ ճանա-
պարհ չէ ճանաչում...

Մեզ հաղորդում են, որ դատի են ենթարկվել
Ախալցխայի հայոց դպրոցի երկու ուսուցիչները,
որոնք այս տարի այնտեղ պատահած խառնա-
կությունների պատճառով արձակված են եղել:

Թիֆլիսի ամառային թատնուսում ներկայացում
ներ տուող ռուսաց դրամատիկական խումբը, որը
եկել է Մոսկվայից, ընդհանրապէս աջողութիւն

չէ գտնում: Ներկայացումներին թատրոնը մեծ
մասամբ դատարի է լինում:

Յայտնի է թէ ինչպէս առհասարակ կեղտոտ
են հագնվում ուսուցիչներ և մանկէն վաճառող
խանութպանները: Այդ բանը շատ հեշտ է
տեսնել և Թիֆլիսում: Պետերբուրգում ի նկա-
տի ունենալով այդ անախորժ սովորությունը,
կարգադրություն է արված, որ հակողություն լինի,
որպէս զի ուսուցիչներ վաճառող խանութպանները
մաքուր հագնվեն, կամ դոնէ մաքուր գոցնոց ու-
նենան:

Գիտությունների կայսերական ճեմարանը, ինչ-
պէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները,
այժմ ունի 295 անդամ, որոնցից 52-ը պատա-
ւոր անդամներ են, 33-ը իսկական, իսկ մնացած-
ներն էլ թղթակից-անդամներ:

Մի երկու օր առաջ մի պատանի փորձ փոր-
ձեց խեղդելու Լուրի մէջ, բայց, բարեբաղդաբար,
շուտով նկատեցին նրան և աղտոցեցին: Ինչու-
սպանությունը գործելու պատճառը, ինչպէս ա-
տու է, այն է եղել, որ նա մեղադրվում էր
«խաղէկից» մի չնչին գումար գողանալու մէջ:

«Новое Время» լրագրի յունիսի 3-ի համարում
կարդում ենք. «Յունիսի կէսին Պետերբուրգից
պէտք է մէկ յանձնաժողով դնայ Թիֆլիսի Անդր-
կովկասեան երկաթուղին դանձարանի անունով
ընդունելու համար»:

ԱՅՍԱՆՍՏՈՒՅՑ մեզ գրում են. «Ինչպէս լը-
սում ենք, մեր քաղաքի ձայնաւորներին եր-
բորդ կարգի ընտրութեան փամփայլ մի քա-
նի անկանոնություններ տեղի ունենալով, ընտ-
րողներից մի քանի անձինք բողոքել են, և պ.
քաղաքագլուխը իր բացատրութեան հետ այդ բո-
ղոքը ուղարկել է պ. նախնադպաւորին: Կարծում
են, որ վերջնաբերութիւն կը լինի»:

Այս օրերս առիթ ունեցանք տեսնելու «Փոս-
տային նամակների հաշւեցոյց» անունը կրող մի
փոքրիկ մեքենայ, որ նման է Թիֆլիսի Արհես-
տաւորաց դպրոցի նախկին աշակերտներից մէկը,
Մարգարիտ Պետրոսեան աղքատներին: Վերջինս
մեքենայի օգնութեամբ կարելի է ստուգել փոս-
տի արկղի մէջ գցած նամակների քանակութիւ-
նը: Մեքենան բաղկացած է մի քառակուսի փոք-
րիկ արկղիկից, որը 9 դիւյմ երկարութիւն ունի,
և 2 դիւյմ բարձրութիւն ու լայնութիւն. այդ
արկղիկը զրկում է փոստային արկղի մէջ, որը
երկու բաժանմունք ունի. մի բաժանմունքը, որի
մէջ դրվում է հաշւեցոյցը, միշտ փակ է մնում և
բանալին մնում է վերաստուգողի մօտ, իսկ երկ-
րորդ բաժանմունքի բանալին գտնվում է փոստի
ծառայի ձեռքում: Նամակն ընկնում է վերին
հաշւեցոյցի վրա, իսկ այնտեղից՝ ներքին յարկը.
փոստային արկղում իւրաքանչիւր նամակի ընկ-
նելուց՝ հաշւեցոյցի վրա աւելանում է և թա-
նշանը: Այդպիսով որքան նամակ է ընկնում,
այնքան էլ աւելանում է թաւանշանը, որ պարզ
ցոյց է տալիս փոստային արկղում ընկած նա-
մակների քանակութիւնը: Երկրորդ թաւանշան-
բով: Այդ գործիքն մեխանիզմը այնքան հասա-
րակ է և պարզ, որ ամենաթեթեւ նամակն ան-
գամ լաւ ներգործութիւն է ունենում և դատարկ
ծրարն անգամ ցոյց է տալիս հաշւեցոյցի թա-
նշանի փոխվելը: Փորձի համար շինված այդ մե-
քենայի ցոյց է տալիս արկղի մէջ ընկած տաս
հազար նամակների քանակութիւնը, բայց կարե-
լի և տասնապատիկ աւելի ցոյց տալ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՇԱՀԱՅԱՐԻԱՅԻ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՏԱՐԱԶԱՅՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԸ

Շվեյցարական կառավարութեան կարգադրու-
թիւնը՝ դուրս ուղարկելու Շվեյցարիայի սահման-
ները գերմանական ոստիկանական պաշտօնայ
Վալդեմուտին, մեծ դժգոհություն է պատճառել
Բերլինի կառավարութեանը: Ինչպէս երևում է,
իշխան Բիսմարկին դուր չէ գալիս՝ այն հանգա-
մանը, որ փոքրիկ Շվեյցարիան չէ ուզում զոր-
ծիք դառնալ Գերմանիայի ձեռքում, և թոյլ չէ
տալիս, որ գերմանական զաւորին ոստիկանու-
թեան անդամները դանապան խաղաղութիւննե-

րով դադարեն Շվեյցարիայում, պահելով այդտեղ
լրտեսներ և երկուշի տակ դնելով շվեյցարական
հողի վրա ապրողներին:

Բերլինի կառավարութիւնը խիստ բանակցու-
թիւններ սկսեց այդ առիթով փոքրիկ հանրապե-
տութեան հետ: Հեռագիրներով բերած տեղեկու-
թիւնները երևում է արդէն, որ դործը սուր
կերպարանք է ստացել, և գերմանական կառա-
վարութիւնը արդէն յայտնել է, որ դիվանագիտա-
կան բանակցութիւնները դադարեցնում է: Սա-
կայն թէ բոլոր կողմնակի սպանաւորները և թէ
ակնարկները ոչ թէ միայն երկուշի շաղկեցին
Շվեյցարիայի վրա, այլ, ընդհակառակն, զրգու-
ցին թէ Շվեյցարիայի հասարակաց կարծիքը
թէ մամուլը:

Շվեյցարիան չէ դոր երկրի իրաւունքներ ունի,
նրա այդ իրաւունքները ճանաչված են բոլոր
պետութիւնների կողմից, այնպէս որ Գերմանիա-
յի պահանջները միանգամայն հակառակ լինելով
այդ իրաւունքներին, մի և նոյն փամփայլ դիպ-
չում են նրա՝ եթէ այսպէս կարելի է ասել, պե-
տական իրաւունքներին: Մեր յիշատակած դեպ-
ք ահագին աղմուկ է հանել և այն պատճառով
որ ամենքն էլ համոզված են, թէ Գերմանիան
այդ բոլոր խառնաշփոթութիւնները յարուցանե-
լով՝ ուրիշ աւելի մեծ ձգտումներ ունի:

Այդ ձգտումները երկուս են. առաջինն այն է,
որ Բերլինում կամենում են, որ գերմանական կա-
ռավարութիւնը իրաւունք ունենայ հետեւելու
Շվեյցարիայում ապրող գերմանացիներին, և թոյլ
չը տալու, որ Շվեյցարիայում ապաստան գտնեն
այն մարդիկ, որոնք այսպէս թէ այնպէս դուր
չեն գալիս գերմանական կառավարութեանը:
Այդպիսի ձգտում ունենալով, իշխան Բիսմարկի
կառավարութիւնը հիմնում է այն բանի վրա,
որ իւրն թէ Շվեյցարիան զիջողաբար է վերա-
բերվում դեպի դանապան յեղափոխական տարրե-
րը: Գերմանիայի երկրորդ ձգտումն է լարել իր
և Շվեյցարիայի յարաբերութիւնը, որպէս զի
Ֆրանսիայի հետ պատերազմ ծագած միջոցին՝
կարող լինի խախտել Շվեյցարիայի չէզոքութիւ-
նը և դորք անցկացնել նրա հողերի վրայով:

Գերմանիայի այդպիսի ձգտումներին հաւանու-
թիւն տալ, ի հարկէ, չէ կարող փոքրիկ հանրա-
պետութիւնը, այլ ընդհակառակն, նա յայտնել է,
որ ինքը չի թոյլ տալ ոչ ոքի խախտելու իր իրա-
ւունքները: Շվեյցարիայի այդպիսի ինքնուրոյն
դիրքը, պէտք է նկատել, շատ վերաբերել է գեր-
մանական մամուլի մի յայտնի մասին, որը պա-
հանջում է խիստ միջոցներ ձեռք առնել նրա
դէմ, շվեյցարական սահմանադրւի վրա անցնա-
ղիւնը պահանջելով և մաքսերը մեծացնելով:
Գերմանական մամուլի միւս մասը արդէն ապա-
ցուցեց, որ այդպիսի միջոցներ ձեռք առնելով
Գերմանիան միայն իրան կը վնասի, որովհետեւ
դրանով Գերմանիան կը զրկվի մի մեծ շուկայից,
որի հետ նա մեծ առևտուր ունի:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷ- ՈՒԹԻՒՆԸ

Պարիզի համաշխարհային ցուցահանդէսը ամ-
բողջապէս կլանել է Ֆրանսիական ժողովրդի և
հանրապետական կառավարութեան ուշադրու-
թիւնը, վիթխարի ցուցահանդիսի դիմաց յետ են
քաշել քաղաքական բոլոր գործերը: Եւ միմիայն
Բուլանթէ իր բարեկամներով առաջ է տանում
այն խնդիրները, որոնք իր ձեռքով սկսված
են ահա մի քանի տարուց ի վեր շահագործու-
թեան թշնամիները, Բուլանթէի զեկավարու-
թեամբ, շարունակում են գրգռել ամբողջ և ժո-
ղովրդի այս և այն դժգոհ դատարկութիւնը կառա-
վարութեան դէմ, սակայն այդ զաւորին զրդուում
ները ներկայումս աւելի քան երբ և իցէ թոյլ և
անգոր կերպարանք են ստացել: Ֆրանսիայից
հալածված Բուլանթէ, անկասկած, կատարեալ
մոռացութեան կը արվէր, եթէ Պարիզում կազ-
մակարկված բարձրագոյն դատարանը չը շարու-
նակէր դատատարանական՝ ճանապարհով առաջ
տանել արկածախնդիր դեներալի գործը, որը և
այդ պատճառով երբեմն-երբեմն արժանանում է
Ֆրանսիական ժողովրդի ուշադրութեանը:

Պարիզից եկած տեղեկութիւնները ցոյց են
տալիս, որ բարձրագոյն ատենը նոր զօլու-
մաններ է գտել և շարունակում է գտնվել, ո-
րոնք աւելի են սաստկացնում Բուլանթէի յան-
ցանքը, հաստատելով, որ նա իր համախոհների
հետ միասին հակապետական ձգտումներ է ունե-
ցել, և նոյն իսկ դաւադրական ձեռնարկու-

թիւններ է արել հանրապետութեան դէմ: Այդ
զօլումները, որոնք անկասկած մի օր լոյս
աշխարհ դուրս կը բերվեն, հաւանականաբար,
վերջնականապէս կը պարզեն հասարակաց կար-
ծիքի համար, թէ ինչ է եղել հանրապետութեան
թշնամիների իսկական նպատակը, ձգտումները
և իղձը: Այդ փամփայլը, պէտք է կարծել, շատ
էլ հեռու չէ:

Ահա հենց այդ աղբու ապացոյցներն են, որոնք
ահ են աղբում բուլանթեանների վրա, որոնք ա-
մեն միջոց գործ են դնում ապացոյցանելու հա-
մար, որ իրանց կուսակցութիւնը ոչ մի բանի
մէջ մեղաւոր չէ, և որ կառավարութեան ա-
րարքները խախտում են, իբր թէ, որինակա-
նութիւնը և Ֆրանսիայի քաղաքացիների ապահո-
վութիւնը վտանգի մէջ են գտնում:

Սակայն Պարիզում գտնվող բուլանթեանների
այդ տեսակ աղմուկները և նոյն մտքով հրատա-
րակած պրօպագանդաները առանձին սպաւորու-
թիւն չեն գործում, և ինչպէս երևում է Բուլան-
թէ իր բոլոր հերոսութիւններով կատարեալ մո-
ռացութեան կը տրվի, եթէ նոյն ինքն հանրապե-
տական կառավարութիւնը մի կողմ թողնի այդ
դեներալի գործը:

Բայց հանրապետական կառավարութիւնը, ի-
պատեւ նրա պէտք է ասել, իրատեսիլ է ու-
զում մեղադրել իր թշնամի բանակը, և անկաս-
կած այդ ուղղութիւնը աւելի կը բարձրացնէ նրա
վարկը, ցուցէ մօտիկ ապագայում արամարհան-
քի արժանացնելով այն բոլոր կուսակցութիւննե-
րի ջանքերը, որոնք երազում են մի նոր դիկ-
տատոր տեսնել Պարիզի պատերի մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բերլինից գրում են, որ գերմանական կա-
ռավարութիւնը մտադրութիւն ունի եռանդուն և
վճռական միջամտութիւն գործել արեւելեան հար-
ցի մէջ:

Պարսից շահին Բերլինում ընդունել են բա-
ւական հանդիսաւոր կերպով:

Աւստրիական մամուլը կասկած է յայտնում
Բալկանի մասին, անկարելիով որ հաւանակա-
նաբար Բալկանի վրա շուտով նոր և շատ մեծ
տարածայնութիւններ կը ծագեն:

Կրիտէի մէջ ծագած խառնակութիւնները
քննելու համար Կ. Պոլսից այնտեղ գնաց ֆի-
նանսների նախկին մինիստր Մանուէլ-փաշա:

Վիեննայում լուր է պատում, որ Գերմա-
նիան ուզում է իր կողմից դեսպան նշանակել
Շվեյցարիայում:

Շուտով պէտք է կատարվի Սերբիայի պա-
տանի թագաւորի Ալեքսանդրի թագադրութեան
հանդէսը: Նատալիա թագուհին շատ է ցանկա-
նում ներկայ լինել այդ թագադրութեանը:

Լուր կայ, որ Շվեյցարիան առաջարկել է
Գերմանիային դիմել Միացեալ-Նահանգների կա-
ռավարութեանը, իբր միջնորդ դատարանի, վերջ
տալու այն տարածայնութիւններին, որոնք ծա-
ղել են Վալդեմուտի միջնադէպի պատճառով:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գանիայի ոստիկանութիւնը մի տարօրինակ մի-
ջոց է նշարել արեւելահայկական դէմ: Ոստիկանու-
թեան պաշտօնականները բռնում են փողոցներում
հարբածներին և մի առանձին կառքով տանում
են նրանց իրանց տները: Նրանց, որոնք չեն կա-
րողանում ասել իրանց հասցէն, բերում են ոստի-
կանատուն և ապա, տեղեկութիւններ հաւաքելով
հարբած մարդկանց ընտելութեան տեղի մասին,
տուն են մղաւորում: Նրանց Հետաքրքիրն այն է,
որ հարբածներին տուն հասցնելու ծախսերը
ստիպված է այն դիւնեմաճառը տալ, որը օղիի
վերջին բաժակն է տուել հարբելուց առաջ:

Լօնդոնի քրէական դատարանը երեք ամսվայ
բանտարկութեան դատապարտեց Ջօզաֆ վէպերի
անդլիական թարգմանութիւնների հրատարակիչ
Հէնրի Բիլեյտէլին՝ այդ «անարդարական գրուածք-
ները» տարածելու համար:

Ֆլորէնցիայի մայր եկեղեցու դանդաղատան
մէջ աղանձները բուն էին դրել և կերակրվում
էին մայր-եկեղեցին այցելողների առատ նուիրա-
բերութիւններով: Ազգաբնակչութիւնը մեծ յար-
գանք էր տածում դէպի այդ աղանձները և մին-
չև այժմ նրանց ոչ ոք ձեռք չէր տալիս: Այժմ
մայր-եկեղեցու վարչութիւնը այն կարծիքի է ե-
կել, որ աղանձները կեղտոտում են և կարող են
փչացնել մայր-եկեղեցու մարմարները: Վերջին-
չեալ վարչութիւնը պիտի ահա՛ն ի նշանակել իւրա-
քանչիւր սպանված աղանձու համար: Աղանձնե-
րի կոտորածն սկսվեցաւ, իսկ աղանձներին

սպանություններն զէմ գրգռված է ամբողջ ազգաբնակչությանը...

Մարդասպանից ստացված տեղեկություններն հաշմանալի են...

Արևելադեղանի 8-րդ կոնգրեսը տեղի կունենայ Ստոկհոլմում...

Շվեյցարիայի մի մասը հեղեղվել է անձրևներից: Լողանում են...

Փարիզի ոսկերչական առանցիկաբար ֆիրմաներից մեկը, Մարտին...

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈԼՈՅԿ, 7 յունիսի: Երեկ Պոլսոյի և Վիստուլայի ելակայանում...

Գաղութի աշակերտների միացած երգեցիկ խումբը: Բաղադր...

ՎԻԵՆՆԱ, 7 յունիսի: Բարձրագույն արտադրության յուրաքանչյուր...

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 9 յունիսի: Երեկ հեռագրիչներ են ստացված...

ՎԻԵՆՆԱ, 9 յունիսի: Երեկվան օրից Շտեյնբուրգում բանտները...

ԲԵՐԼԻՆ, 9 յունիսի: «Norddeutsche Allgemeine Zeitung» լրագրում...

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՄԱՅԿՈՊ, Սեդրակ Լուսինյանց, Զեր ուղարկած 20 բուրլին...

Ժամանակաւոր Խմբագիր Թ. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՅԱՆ Հրատարակիչ...

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ

ԴԵՐԲԵՆՏԻ «ՇԱՀԻՐ» ԽԱՉԱՏՈՒՐԻ

ԾԱՂԻԿ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՐԳԵՐԸ

Վաճառվում է «Կենտրոնական գրադաճառանոցում» և հրատարակչի մոտ...

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂ

ամառվայ ամիսներին թիֆլիսում գտնվելով, ցանկանում է մասնաւոր դասեր...

Շտապում ենք յայտնել հայ ընթերցող հասարակութեան, որ ներքին գործերի...

ՏԱՐԱԶ

ԳԵՂԱՐԻՆՍՏԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՐԳԻԾԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱՆԴԻՍ

Մանրամասն յայտարարութիւնը կը յայտարարենք առաջիկայ սեպտեմբերին...

Խմբ.-Հրատ. ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՅԱՆ 3-3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM. ՅԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ...

ДАНТИСТЪ ЗАПАКЪ АМЕРИКАНЕЦЪ

Докторъ зубной хирургіи Бальтиморскаго Зубоврачебнаго училища въ АМЕРИКѢ...

Принимаетъ больныхъ по зубнымъ болѣзнямъ ежедневно отъ 9 часовъ утра до 5 часовъ вечера...

ՆՈՐԵՐՈՒՄՍ ՀԱՍԱԻ ԹԻՖԼԻՍ

ԱՄԵՐԻԿԱՆԵՑ

ԱՏԱՄՆԱՐՈՑԻ ՎԱԼԼԱԿ

Գօլտոր ատամնաբուժութեան Ամերիկայի ԲԱՆՏՄՈՐ քաղաքի ատամնաբուժական...

Պրիշկին Ե. Ժամ կէսօրից յետոյ, իր բնակարանում, Սօլոխի փողոցում, առաջ քահանայ...

ԷՐԶՐՈՒՄ ԳԱՂԱԲԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հարկաւոր է մանկավարժական նախապատրաստութիւն ունեցող մի ՏԵՍՈՒԶ...

ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՐԳԻԿ

Առաջ չափահասների համար. ԳԵՌՈՐԳ ԲԱՐԵՊԱՇՏԻՆԻ: Վաճառվում է կենտրոնական գրադաճառանոցում...

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԵԱՆԻ (Կուկիւ, Վօրոնցովի արձանի հանդէպ) Հիւանդներին ընդունում են ամէն օր...



Въ редакціи газеты „МШАКЪ“ продаются слѣдующія брошюры: 1) „Экономическое Положеніе Турецкихъ Армянъ“...